

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԲԱՆԱԶԵՎ

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{n \cdot D_n}}$$

I – տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

n – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

N – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

K_n – վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի գումարը:

D_n – վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված *n*-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

ՓԱՍՏԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

1. Դիցուք հաճախորդին տրամադրվում է **24,000,000** ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, **240** ամիս մարման ժամկետով, տարեկան 7.2% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

- Հայտի քննարկման վճար՝ 1,000 ՀՀ դրամ
- գրավի գնահատման վճար՝ 15,000 ՀՀ դրամ
- գրավադրման վճար՝ 94,000 ՀՀ դրամ
- Ապահովագրավճար՝ 36,000 ՀՀ դրամ:
- Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 100,000 ՀՀ դրամ

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 7.6% :

2. Դիցուք հաճախորդին տրամադրվում է **5,000,000** ՀՀ դրամ գումարի չափով բնակարանի ձեռքբերման վարկ, **120** ամիս մարման ժամկետով, տարեկան 7.2% տոկոսադրույքով, անուիտետային մարման կարգով:

Հաճախորդի ծախսերն են՝

- Հայտի քննարկման վճար՝ 1,000 ՀՀ դրամ
- գրավի գնահատման վճար՝ 15,000 ՀՀ դրամ
- գրավադրման վճար՝ **94,000** ՀՀ դրամ
- Ապահովագրավճար՝ 7,500 ՀՀ դրամ
- Վարկային փաթեթի միանվագ սպասարկման վճար՝ 50,000 ՀՀ դրամ

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի՝ 8.3% :